

# ՆՅԱՐԴԱՔԱՆԱԿԱՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ՄԵԾԱՀԱՍԱԿ ՊԱՅԻՆՏՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ ԵՐԱԿԱՅԻՆ ԹՐՈՄԲՈԶՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԿԼԻՆԻԿԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

## Ամփոփում

### Ներածություն.

Ուղեցույցի նպատակն է տրամադրել արդի ապացուցողական տեղեկատվություն ինտենսիվ թերապիայի բաժանմունքի (ԻԹԲ) նյարդաբանական հիվանդություններով մեծահասակ պացիենտների շրջանում երակային թրոմբոզների կանխարգելման վերաբերյալ և բարելավել այս ախտաբանությունների բուժման ելքերը: Ուղեցույցը մասնավորապես վերաբերվում է գանգուղեղային վնասվածքներով, իշեմիկ և հեմոռագիկ ինսուլտներով, սուբարախնոիդալ արյունազեղումներով, գլխուղեղի նորագոյացություններով և ողնուղեղի վնասվածքներով պացիենտներին:

### Մեթոդներ.

Սույն Ուղեցույցը մշակվել է Անեսթեզիոլոգների և ինտենսիվ թերապևտների հայակական միության անդամների կողմից: Փաստաթղթի հիմքն է հանդիսացել Ամերիկայի Նեյրոինտենսիվ թերապիայի միության 2016 թ. “Նյարդաբանական հիվանդություններով պացիենտների շրջանում երակային թրոմբոզների կանխագելման կլինիկական ապացուցողական ուղեցույց”-ը (Prophylaxis of Venous Thrombosis in Neurocritical Care Patients: An Evidence-Based Guideline. A Statement for Healthcare Professionals from the Neurocritical Care Society): Տեղեկատվության որակը գնահատելիս և ցուցումների ուժը որոշելիս սկզբնաղբյուր հանդիսացող փաստաթղթում հիմք է ընդունվել Ցուցումների ուսումնասիրման, ստեղծման և գնահատման դասակարգման համակարգը (Grading of Recommendations Assessment, Development and Evaluation – GRADE): Տեղայնացման/ադապտացիայի աշխատանքները կատարվել են ADAPTE մեթոդաբանության հիման վրա: Պատասխանատու համակարգողը և աշխատանքային խմբի անդամները հայտարարագրել են իրենց շահերի բախման բացակայության վերաբերյալ տեղեկատվությունը: Ուղեցույցի բոլոր դրույթները քննարկվել և հավանության են արժանացել Անեսթեզիոլոգների և ինտենսիվ թերապևտների հայակական միության կողմից (արձանագրությունը կցվում է): Ուղեցույցը նախատեսված է անեսթեզիոլոգների, ինտենսիվ թերապևտների, նեյրոլիրաբույժների, ինչպես նաև առողջապահության կազմակերպիչների համար: Փաստաթուղթը ենթակա է պարբերական թարմացումների և/կամ խմբագրման յուրաքանչյուր 5 տարին մեկ կամ ավելի հաճախակի՝ կախված տվյալ ոլորտում նոր գիտագործնական տեղեկատվության ի հայտ գալուց:

### Արդյունքներ.

Ձևակերպվել է ԻԹԲ-ի նյարդաբանական տարբեր հիվանդություններով և վնասվածքներով մեծահասակ պացիենտների շրջանում երակային թրոմբոզների կանխարգելման 35 խորհուրդ, որոնցից 14-ին շնորհվել է “ուժեղ” կարգավիճակ: Մանավորապես ներկայացվել են ապացույցներ

զանգուղեղային վնասվածներից, սուբարախնոդալ արյունազեղումից և իշեմիկ ինսուլտից հետո վաղ թրոմբականխարգելման արդյունավետությունը և անվտանգությունը

### **Եզրակացություն.**

Բազմաբնագավառ մոտեցումը և ապացուցողական խորհուրդներին հետևելը համակցված կիրառվող միջամտությունների օգուտ/վնաս հարաբերությունների վերլուծության հետ, դա ԻԹԲ-ի ծանր նյարդաբանական ախտաբանություններով պացիենտների բուժման ելքերի բարելավման բանալիներն են:

### **Բանալի բառեր**

*Ապացուցողական բժշկություն, ուղեցույցներ, ցուցումների ուսումնասիրման, ստեղծման և գնահատման դասակարգման համակարգ, երակային թրոմբոզ, ինսուլտ, սուբարախնոդալ արյունազեղում, զանգուղեղային վնասվածք, ներուղեղային արյունազեղում, թոքային զարկերակի թրոմբոէմբոլիա*

### **Պատասխանատու համակարգող**

Մանգոյան Հ.Ն., ք.գ.թ., Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի շարունակական բժշկական կրթության ֆակուլտետի անեսթեզիոլոգիայի և ինտենսիվ թերապիայի ամբիոնի դոցենտ, «Էրեբունի» բժշկական կենտրոնի վերակենդանացման բաժանմունքի գիտական ղեկավար:

### **Աշխատանքային խմբի անդամներ**

- Գնունի Ա.Ս. ՀՀ ԱՆ գլխավոր անեսթեզիոլոգ-ռեանիմատոլոգ, «Նաիրի» բժշկական կենտրոնի գործադիր տնօրեն
- Վարոսյան Ա.Ֆ. ք.գ.թ., Հայաստանի անեսթեզիոլոգների և ինտենսիվ թերապևտների միության նախագահ, Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի անեսթեզիոլոգիայի և ինտենսիվ

թերապիայի ամբիոնի դոցենտ, «Էրեբունի» բժշկական կենտրոնի նյարդավիրաբուժության բաժանմունքի բժիշկ-անեսթեզիոլոգ

- Ղազարյան Ա.Ա. բ.գ.թ., «Արմենիա» բժշկական կենտրոնի անզգայացման և վերակենդանացման ծառայության ղեկավար
- Տանարջյան Ռ.Վ. բ.գ.դ., պրոֆեսոր, Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի նյարդավիրաբուժության ամբիոնի վարիչ

### **Շահերի բախման հայտարարագիր և ֆինանսավորման աղբյուրներ**

Պատասխանատու կարգավորողը և աշխատանքային խմբի անդամները հայտարարում են իրենց շահերի բախման բացակայության մասին: Սույն փաստաթղթի մշակման աշխատանքները ֆինանսավորվել են ՀՀ ԱՆ կողմից: Ֆինանսավորող կառույցը չի ունեցել և ոչ մի ազդեցություն սույն ուղեցույցի մշակման որևէ փուլի վրա:

### **Շնորհակալական խոսք**

Պատասխանատու կարգավորողը իր երախտագիտությունն է հայտնում սույն ուղեցույցի մշակման աշխատանքներին իրենց աջակցությունը, խորհրդատվությունը և մասնագիտական գիտելիքները տրամադրած գործընկերներին, հատկապես՝ Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի անեսթեզիոլոգիայի և ինտենսիվ թերապիայի ամբիոնի կլինիկական օրդինատոր՝ Ս.Ենոքյանին:

**Ուղեցույցը չի կարող փոխարինել բժշկի որոշումներ ընդունելու հմտություններին անհատ պացիենտի վարման դեպքում և տվյալ կլինիկական իրավիճակի պայմաններում:**

### **Բովանդակություն**

Նախաբան

Տեղեկատվության որոնման և գնահատման մեթոդաբանություն

ԵԹ-ի կանխագելումը իշեմիկ ինսուլտով ԻԹԲ-ի պացիենտների շրջանում

ԵԹ-ի կանխագելումը ներուղեղային արյունազեղումներով ԻԹԲ-ի պացիենտների շրջանում

ԵԹ-ի կանխարգելումը անևրիզմատիկ սուբարախնոիդալ արյունազեղումներով ԻԹԲ-ի պացիենտների շրջանում

ԵԹ-ի կանխարգելումը գանգուղեղային վնասվածքներով ԻԹԲ-ի պացիենտների շրջանում

ԵԹ-ի կանխարգելումը գլխուղեղի նորագոյացություններով ԻԹԲ-ի պացիենտների շրջանում

ԵԹ-ի կանխարգելումը ողնուղեղի վնասվածքով ԻԹԲ-ի պացիենտների շրջանում

ԵԹ-ի կանխարգելումը նյարդավիրաբուժական և նյարդա-անոթային միջամտությունների ենթարկվող ԻԹԲ-ի պացիենտների շրջանում

Եզրակացություն

Ներդրման հնարավորություններ և աուդիտի ցուցանիշներ

Գրականության ցանկ

Հավելված 1. Ցուցումների ուսումնասիրման, ստեղծման և գնահատման դասակարգման համակարգ (GRADE)

## **Հապավումներ**

աՍԱԱ՝ անևրիզմատիկ սուբարախնոիդալ արյունազեղում

ԳՈԻՎ՝ գանգուղեղային վնասվածք

ԳՍ՝ Գլազգոյի սանդղակ

ԴԹԿ՝ դեղաբանական թրոմբոլիտիկ կանխարգելում

ԵԹ՝ Երակային թրոմբոլիտիկ

ՉՃ՝ զարկերակային ճնշում  
ԻԹԲ՝ ինտենսիվ թերապիայի բաժանմունք  
ԿԵԿ՝ կենտրոնական երակային կաթետր  
ՀՇ՝ համակարգչային շերտագրություն  
ՄՌՇ՝ մագնիսառեզոնանսային շերտագրություն  
ՆԱ՝ ներուղեղային արյունազեղումներ  
ՍԱԱ՝ սուբարախնոիդալ արյունազեղում  
ՆԳՃ՝ ներգանգային ճնշում  
ՆԳՀ՝ ներգանգային հիպերտենզիա  
ՆԻԹ՝ նեյրոինտենսիվ թերապիա  
ԻԻ՝ իշեմիկ ինսուլտ  
ՈՎ՝ ողնուղեղի վնասվածք  
ՈՖՀ՝ ոչ ֆրակցիոն հեպարին  
ՊԲՎՓ՝ պատահական բաշխմամբ վերահսկվող փորձարկում  
ԹԱՕ՝ թոքերի արհեստական օդափոխություն  
ԹՂԹ՝ թոքային զարկեարի թրոմբոլիտիկա  
ԽԵԹ՝ խորանիստ երակների թրոմբոզ  
ԷԳ՝ էլաստիկ զուգագուլպաներ պարբերական երակային ճնշման (ՊԵՃ)  
BTF (Brain Trauma Foundation)՝ Գլխուղեղի վնասվածքի հիմնադրամ  
IVC (intermittent venous compression)՝ ընդհատվող երակային ճնշում  
rTPA (resombinant tissue plasminogen activator)՝ հոյավածքային պլազմինոգենի  
ռեկոմբինանտ ակտիվատոր  
SatO2 (oxygen saturation)՝ զարկերակային արյան հագեցվածությունը թթվածնով

## **Նախաբան**

Երակային թորմոբոլիզմը (ԵԹ), որը ներակայացված է ստորին վերջույթների խորանիստ երակազյին թրոմբոզով (ԽԵԹ) և թոքային զարկերակի թրոմբոլիզմով (ԹՁԹ), տարածված խնդիր է ինտենսիվ թերապիայի բաժանմունքում (ԻԹԲ) նյարդաբանական հիվանդությունների հետևանքով անշարժության մատնված պացիենտների շրջանում: ԵԹ-ից առաջացած բարդությունները հանդիսանում են իշեմիկ ինսուլտով և սրտամկանի ինֆարկտով պացիենտների մահվան առաջատար պատճառը [1]: Ընդհանուր բնակչության շրջանում ԵԹ-ի տարածվածությունը կազմում է մոտ երկու դեպք 1000 հոգու կտրվածքով [2-5] մինչդեռ ԻԹԲ-ի պացիենտների շրջանում այն կարող է հասնել 20 դեպքի յուրաքանչյուր 1000 պացիենտի համար և 14.5 դեպք հաճախականության անկախ դեղաբանական կանխագաելմանը [6, 7]:

Նյարդաբանական հիվանդություններով կամ նյարդային համակարգի վնասվածքներով պացիենտները հանդիսանում են ԵԹ-ի առաջացման բարձր ռիսկի խումբ: Սա պայամանվորված է մի շարք գործոններով, որոնցից ամենա սկզբունքայիններն են՝ պարալիզված վերջույթներում տեղի ունեցող արյան հոսքի դանդաղումը և երակարտև կոմատոզ վիճակը [1, 8, 9]: Լրացուցիչ իր դերն է խաղում թրոմբոգոյացման մեխանիզմների և էնդոթելիումի ակտիվացումը այս պացիենտների շրջանում [10-13]: Այս բոլոր հիմնահարցերը լուսաբանող ապացուցողական տեղեկատվությունը ԻԹԲ-ի պացիենտների վերաբերյալ սահմանափակ է և հաճախ իրարամերժ: Այս ուղեցույցի նպատակն է տրամադրել պրակտիկ բժշկին ապացուցողական տեղեկատվության վրա հիմնված խորհուրդներ ԻԹԲ-ում նյարդաբանական հիվանդություններով մեծահասակ պացիենտների շրջանում ԵԹ-ի կանխարգելման վերաբերյալ և բարելավել այս ախտաբանությունների բուժման ելքերը:

### **Տեղեկատվության որոնման և գնահատման մեթոդաբանություն**

Սույն Ուղեցույցը մշակվել է Անեսթեզիոլոգների և ինտենսիվ թերապևտների հայակական միության անդամների կողմից: Փաստաթղթի հիմքն է հանդիսացել Ամերիկայի Նեյրոինտենսիվ թերապիայի միության 2016 թ. “Նյարդաբանական հիվանդություններով պացիենտների շրջանում երակային թրոմբոզների կանխագելման կլինիկական ապացուցողական ուղեցույց”-ը (Prophylaxis of Venous Thrombosis in Neurocritical Care Patients: An Evidence-Based Guideline. A Statement for Healthcare Professionals from the Neurocritical Care Society): Տեղեկատվության հավաքագրման մարտավարությունը ընդգրկել է բանալի բառերի օգնությամբ իրականացվող բազմաբնագավառ որոնում MEDLINE, PubMed, Cochrane library, National Guideline Clearinghouse և UpToDate շտեմարաններում: Որոնման ժամանակային շրջանակն է՝ 2010 – 2017թթ.: Փաստաթղթերի նկատմամբ կիրառվել են հետևյալ տեսակավորման ցուցանիշները՝ ապացուցողական բնույթ (համակարգված ամփոփ տեսություն, պատահական բաշխմամբ վերահսկվող փորձարկում, ցանկացած խոհուրդի վերաբերյալ հստակ հղումների առկայություն, ապացույցների ուժի և որակի գնահատականներ և այլ), ազգային կամ համաշխարհային ամփոփումների կարգավիճակ, անգլերեն լեզու:

Տեղեկատվության որակը գնահատելիս և ցուցումների ուժը որոշելիս սկզբնաղբյուր հանդիսացող փաստաթղթում հիմք է ընդունվել Ցուցումների ուսումնասիրման, ստեղծման և գնահատման դասակարգման համակարգը (Grading of Recommendations Assessment, Development and Evaluation – GRADE): Համաձայան այս համակարգի ապացույցների մակարդակը կարող է լինել **“բարձր”** ինչը ենթադրում է, որ հետագա հետազոտությունները քիչ հավանական է, որ կփոփոխեն հեղինակների վստահությունը ստացված արդյունքների վերաբերյալ, **“միջին”** հետագա հետազոտությունները հավանական է, որ կփոփոխեն հեղինակների վստահությունը ստացված արդյունքների վերաբերյալ և **“ցածր”** հետագա հետազոտությունները ամենայան հավանականությամբ զգալի կփոփոխեն

հեղինակների վստահությունը ստացված արդյունքների վերաբերյալ: Խորհուրդները գնահատվել են իբրև “**ուժեղ**” երբ տվյալ միջամտության բարենպաստ ազդեցությունները հստակ գերակշռում են անցանակալի հետևանքներին և “**պայամանական**” երբ տվյալ միջամտության բարենպաստ և անբարենպաստ ազդեցություններ հավասարակշռության վերաբերյալ վստահությունը հստակ չէ (մանրամասները տես՝ Հավելված 1.):

Տեղայնացման/ադապտացիայի աշխատանքները կատարվել են ADAPTE մեթոդաբանության հիման վրա: Պատասխանատու համակարգողը և աշխատանքային խմբի անդամները հայտարարագրել են իրենց շահերի բախման բացակայության վերաբերյալ տեղեկատվությունը: Ուղեցույցի բոլոր դրույթները քննարկվել և հավանության են արժանացել Անեսթեզիոլոգների և ինտենսիվ թերապևտների հայակական միության անդամների կողմից (արձանագրությունը կցվում է): Ուղեցույցը նախատեսված է անեսթեզիոլոգների, ինտենսիվ թերապևտների, ներյովիրաբույժների, ինչպես նաև առողջապահության կազմակերպիչների համար: Փաստաթուղթը ենթակա է պարբերական թարմացումների և/կամ խմբագրման յուրաքանչյուր 5 տարին մեկ կամ ավելի հաճախակի՝ կախված տվյալ ոլորտում նոր գիտագործնական տեղեկատվության ի հայտ գալուց:

### **ԵԹ-ի կանխագելումը իշեմիկ ինսուլտով ԻԹԲ-ի պացիենտների շրջանում**

Իշեմիկ ինսուլտը՝ մահացության և հաշմանդամության համար առաջին պատճառն է աշխարհում ներկայցնելով իրենից ցանկացած առողջապահական համակարգի ամենա լուրջ մարտահավերժներից մեկը [14-16]: ԻԻ-ի հաջոչդող առաջին երեք ամիսների ընթացքում ԹԶԹ զարգանում պացիենտների 2.5% -ի շրջանում իսկ ԽԵԹ-ը և ԹԶԹ-ն հաճախականությունը կազմում է 2.5% և 1.2%



համապատասխանաբար [17, 18]: Ինսուլտների քանակի, հետիինսուլտային վերականգնման և վերապրածների կյանքի տևողության աճի հետ զուգահեռ անխուսափելիորեն բարձրանում է ԵԹ-ի տարածվածությունը այս պացիենտների շրջանում [14, 15, 19]:

Իշեմիկ ինսուլտի դեպքում հակամակարդիչ թերապիայի հիմնական վտանգը դա գլխուղեղի օջախի հեմոռագիկ ձևափոխումն է: Բարեբախտաբար գոյություն ունեն այս հարցը լուսաբանող մի շարք բարձր որակի պատահական բաշխմամբ վերահսկվող փրձարկումներ (ՊԲՎՓ) և առաջատար միությունների ուղեցույցեր [20, 21]: Բազմաթիվ մետա վերլուծություններ ուսումնասիրել են ԻԻ-ի պարագայում ինչպես դեղաբանական թրոմբականխարգելման (ԴԹԿ) նպատակով որ ֆրակցիոն հեպարինի (ՈՖՀ), ցածրամոլեկուլայր հեպարինների (ՑՄՀ) այնպես էլ մեխանիկական թրոմբականխարգելման միջոցների՝ էլաստիկ զուգագուլպաների (ԷԳ) և ընդհատվող երակային ճնշման (intermittent pneumatic venous compression stockings, IPC) արդյունավետությունն ու անվտանգությունը [22-25]: Ընդհանուր առմամբ բոլոր այս հետազոտությունները սատարում են ԴԹԿ ինչպես ոչ ՈՖՀ-ով այնպես էլ ՑՄՀ-ով: IPC սարքերի համատեղ կիրառումը դեղաբանական միջոցների հետ ապահովում է հավելյալ օգուտ [22-25] մինչդեռ ԷԳ-րի արդյունավետությունը դեռ հստակ ապացուցված չէ: Ամեն դեպքում ԷԳ-րի կիրառումը անվտանգ է բացառությամբ մաշկի մակերեսային վնասվածքների առաջացման որոշակի ռիսկի:

Համաձայն CLOTS-3 հետազոտության տվյալների ինսուլտին հաջորդող 0-3-րդ օրերի ընթացքում մեկնակրկած IPC սարքերով թրոմբականխարգելման խմբում գրանցվել եր ԵԹ-ի բացարձակ ռիսկի նվազում 3.6% (95% CI, 1.4-5.8%) [24]: Երկու առաջահայաց հետազոտություններ ցուցադրել են ինրպես ոչ ֆրակցիոն հեպարինի այնպես էլ ՑՄՀ-րի կիրառելիությունը [26, 27]: Ըստ PREVAIL հետազոտության արդյունքների ՑՄՀ-ը իհամեմատ ՈՖՀ-ի ավելի արդյունավետ են կանխարգելում

ԽԵԹ-ը ԻԻ-ով պացիենտների շրջանում [22]: Մասնավորապես գրանցվել էր ԵԹ-ի ռիսկի 43% նվազում իհամեմատ ՈՖՀ-ի (RR 0.57, 95% CI 0.44-0.76, p=0.0001) [22]:

Ընդհանուր առմամբ ԻԻ-ով ԻԹԲ-ի պացիենտների շրջանում լուրջ արյունահոսության վտանգը ՈՎՀ-ով կամ ՑՄՀ-րով բուժման ֆոնին ցածր է [27, 28]: ԷԳ-րի և IPC միջոցների արդյունավետությունը համարվում է ապացուցված [23, 24] և ներկայումս ընդունվում է իբրև ստադարտ: Սակայն պահպանվում են որոշ մտահոգություններ կապված վերոնշյալ մեթոդների հնարավոր բարդությունների հետ, օրինակ՝ երակային թրոմբի տեղաշարժի այն պացիենտների շրջանում, որոնք մինչ ճնշող միջոցների տեղադրումը եղել էին անշարժ [29, 30]:

ԵԹ-ի դեղաբանական կանխարգելումը կիսագնդային տարածուն ԻԻ-ով պացիենտների շրջանում անմիջապես հեմիկրանիէկտոմիայի վերահատությունից հետո, դեռ բավականաչափ ուսումնասիրված չէ [31]: ՈՖՀ և ՑՄՀ-ը համարվում են անվտանգ այնպիսի ընդհանուր բնույթի նեյարոպալիրաբուժական միջամտություններից հետո ինչպիսիք են պլանային և շտապ կրանոտոմիանրը [32-34]: Ելնելով այս փաստից և ԵԹ-ի բարձր ռիսկից ԴԹԿ հեմիկրանիէկտոմիաներից հետո նույնպես կարելի է համարել հիմնավորված: Ներանոթային միջամտությունների կրող պացիենտների շրջանում ԴԹԿ դեռ բավականաչափ ուսումնասիրված չէ: Այնուամենայնիվ բազմաթիվ մասնագիտացված կենրոնների գործըլակարգերում հաճախակի ընդգրկված է ՈՖՀ-ի մեծ դեղաչափերի հարմիջամտական օգտագործումը որոշ դեպքերում նույնիսկ հոյավածքային պլազմինոգենի ռեկոմբինանտ ակտիվատորի (rTPA) հետ համատեղ: Այս դեպքերում հեմիկրանիէկտոմիայից կամ rTPA ներարկումից 24 ժամ սպասելը խելամիտ է, չնայած որ այս հարցի շուրջ չկա որևէ բարձր որակի ապացուցողական տեղեկատվություն:

## **Խորհուրդներ**

1. Իշեմիկ ինսուլտով բուրբ պացիենտների շրջանում մենք խորհուրդ ենք տալիս սկսել ԴԹԿ որքան հնարավոր է շուտ (ուժեղ խորհուրդ, բարձր որակի ապացույցներ)
2. Իշեմիկ ինսուլտով և սահմանափակ շարժունակությամբ պացիենտների շրջանում մենք խորհուրդ ենք տալիս կանխարգելիչ դեղաչափերով ՑՄՀ-ր այլ ոչ թե՛ ՈՖՀ IPC հետ համակցված (ուժեղ խորհուրդ, բարձր որակի ապացույցներ)
3. Ելնելով ապացուցողական տեղեկատվության սահմանափակ ծավալից ԷԳ-ի կիրառման վերաբերյալ խորհուրդ ձևակերպել հնարավոր չէ, չնայած այս մոտեցումը համարվում է անվտանգ
4. Հեմիկրանիէկտոմիա կամ ներանոթային միջամտություններ կրած պացիենտների շրջանում մեքն խորհուրդ ենք տալիս սկսել ԵԹ-րի կանխարգելում ոչ ֆրակցիոն հեպարինով կամ ՑՄՀ-րով և/կամ IPC-ով բացառությամբ rTPA-ի կիրառման դեպքերի երբ հարկավոր է հետաձգել ԴԹԿ 24 ժամով (թույլ խորհուրդ, ցածր որակի ապացույցներ)

### **ԵԹ-ի կանխագելումը ներուղեղային արյունազեղումներով ԻԹԲ-ի պացիենտների շրջանում**

Ներուղեղային արյունազեղումներով (ՆԱ) պացիենտների շրջանում առկա է ԵԹ զգալի վտանգ: Կլինիկորեն արտահայտած ԽԵԹ-ի տարածվածությունը ՆԱ-ով պացիենտների շրջանում ըստ հետահայած դիտողական հետազոտությունների արդյունքների կազմում է 1-2% [35-38], իսկ FAST փորձարկման պլացերոյի խմբում կազմել էր 5% [39]: Համաձայն երկու առաջահայաց դիտողական հետազոտությունների ստորին վերջույթների պլանային սոնոգրաֆիկ հետազոտությամբ ԽԵԹ-ը ախտորոշվել 20-40% պացիենտների շրջանում [40, 41]: Կլինիկորեն արտահայտվող ԹՁԷ-ի հաճախականությունը կազմում է 0.5-2% [35-43]: Այս դեպքերի կեսը ավարտվում է մահվան ելքով [17]: Երկու հետահայաց մեծածավալ հետազոտությունների տվյալներով ԵԹ-ի ռիսկը ՆԱ-ով պացիենտների շրջանում 2-4 անգամ ավելի բարձր է քան ԻԻ-ով պացիենտների դեպքում [36, 38]:

Ազդրի մակարդակի հասնող IPC և էԳ-երի զուգակցված և միայն էԳ-րի կիրառման արդյունավետությունը ուսումնասիրող առաջահայաց ՊԲՎՓ արձանագրել է սիմպտոմատիկ ԽԵԹ-ի առաջացման ռիսկի զգալի նվազում զուգակցված թերապիայի խմբում [44]: CLOTS3 ուսումնասիրությունը տրամադրում է հավելյալ ապացույցներ ՆԱ պացիենտների շրջանում IPC սարքերի արդյունավետության մասին [24]: Իսկ CLOTS1-ի արդյունքում պարզվել է, որ էԳ-ը չեն հավաստիօրեն կանխագելում ԵԹ և նրանց կիրառումը ուղորդվում է մաշկի վնասվածքների առաջացման ռիսկով [45]:

Փոքր առաջահայաց ՊԲՎՓ հետազոտել է ՆԱ-ով պացիենտների մոտ ԵԹ-ի դեղաբանական կանխարգելման օգուտներն ու ռիսկերը: Dickmann և համահեղինակները համեմատել են օրը 3 անգամ 5000 միավոր ՈՖՀ Ե/մ կիրառումը IPC միայնակ կիրառման հետ, իսկ Boer և համահեղինակները առաջահայացորեն հետազոտել են օրը 3 անգամ 5000 միավոր ՈՖՀ Ե/մ կիրառումը [46, 47]: Այս հետազոտությունների որակը սահմանափակվում է նրանց փոքր չափերի, ԵԹ-ի և արյունահոսության դեպքերի ցածր հաճախականությամբ: Երկու նախորդող մետա վերլուծությունները ուսումնասիրել են ՆԱ-ով պացիենտների մոտ ԵԹ-ի դեղաբանական կանխարգելման էֆեկտները, չնայած որ դիտարկումների իրական թիվը փոքր է և ներառում է ցածր որակի հետազոտություններ [47, 48]: Paciaroni և կոլեգաների [49] կողմից իրականացված առավել բազմակողմանի մետա վերլուծությունը ներառում է տվյալներ Boer և այլոց [46] և Orken և այլոց [47] առաջահայաց ՊԲՎՓ, ինչպես նաև 2 ավելի մեծ միակենտրոն հետահայաց դիտորդական հետազոտություններ [50, 51]: Այս մետա վերլուծությունը ցույց է տվել ԹՁԹ զգալի նվազում կապված ՈՖՀ կամ ՑՄՀ կանխարգելման հետ (RR 0.37, 95% CI 0.17-0.80,  $p = 0.01$ ) համեմատ դեղաբանական կանխարգելում չիրականացնելու հետ, սակայն ցույց չի տվել զգալի տարբերություն ԽԵԹ-ի, հեմատոմայի մեծացման կամ մահացության համար [49]: Կրծքային թերապևտների ամերիկյան քոլեջի հակաթրոմբոտիկ բուժման և թրոմբոզի կանխարգելման ուղեցույցի (American College of Chest Physicians Guidelines for Antithrombotic Therapy and Prevention of Thrombosis) 9-րդ վերանայման [52] մեջ համեմատվում է սուր ԻԻ-ով պացիենտների շրջանում դեղաբանական կանխարգելման ավելի բարձր որակի հետազոտություններից ստացված ԵԹ-ի նվազման հաճախականության տվյալները Boer և այլոց [46], Dickmann և այլոց [53], և

Orken և այլոց [47] ՆԱ-ով պացիենտների սահմանափակ որակի հետազոտություններից ստացված հեմատոմայի մեծացման հաճախականության տվյալների հետ, որը հիմք է ծառայել ՆԱ-ով պացիենտների համար ԵԹ-ի կանխարգելման խորհուրդների համար: Օգտագործելով այս մեթոդները, ԵԹ-ի դեղաբանական կանխարգելումը իջեցնում է ախտանշանային ԽԵԹ-ի ռիսկը (RR 0.31, 95% CI 0.05-1.13) կամ մահացությունը (RR 1.05, 95% CI 0.46-2.36) [52]:

### **Խորհուրդներ**

1. **Մենք խորհուրդ ենք տալիս ԵԹ-ի կանխարգելման համար կիրառել IPC և/կամ ԷԳ (փոխարեն կանխարգելում չիրականացնելու) հոսպիտալիզացիայի սկզբից ի վեր (ուժեղ խորհուրդ, բարձր որակի ապացույցներ):**
2. **Կայուն հեմատոմայով և տվյալ պահին կոագուլոպաթիա չունեցող պացիենտների շրջանում ԵԹ-ն կանխելու համար մենք խորհուրդ ենք տալիս կիրառել Ե/մ ՈՖՀ կամ ՑՄՀ կանխարգելիչ դեղաչափեր՝ սկսած հոսպիտալիզացումից 48ժ անց (թույլ խորհուրդ, ցածր որակի ապացույցներ):**
3. **Մենք խորհուրդ ենք տալիս շարունակել ԵԹ մեխանիկական կանխարգելումը IPC-ների միջոցով դեղաբանական կանխարգելում սկսած պացիենտների մոտ (թույլ խորհուրդ, ցածր որակի ապացույցներ):**

### **ԵԹ-ի կանխարգելումը անևրիզմատիկ սուբարախնոիդալ արյունազեղումներով ԻԹԲ-ի պացիենտների շրջանում**

Անևրիզմատիկ սուբարախնոիդալ արյունազեղումով (աՍԱԱ) պացիենտները ունեն ԵԹ-ի առաջացման բարձր ռիսկ: Ստորին վերջույթի սուր ԽԵԹ-ի հաճախականությունը կազմում է 1.5-24%, իսկ կլինիկորեն արտահայտվող ԹՁԷ-ի հաճախականությունը 1.2-2% [37, 54-57]: ԵԹ-ն կապված է հիվանդանոցում մնալու համարյա կրկնակի անգամ ավելի երկար միջին տևողության հետ  $p < 0.001$ ), և թոքային/սրտային բարդությունների մեծացած ռիսկի հետ՝ ներառյալ շճմած սրտամկան և թոքերի այտուց (OR 2.8, 95% CI 2.4-3.2): ԵԹ-ն կապված է

նաև ինֆեկցիոն բարդությունների՝ ներառյալ թոքաբորբը և սեպսիսը (OR 2.8, 95% CI 2.4-3.3), ինչպես նաև վազոսպազմի հաճախեցման հետ (OR 1.3, 95% CI 1.0-1.6) [54]:

ԵԹ-ի դեղաբանական կանխարգելման համապատասխան մարտավարությունը որոշելը խնդրահարույց է սուր ներզանգային արյունահոսության պարագայում: Պացիենտները հնարավոր է նաև կարիք ունենան արտաքին փորոքային դրենաժ տեղադրելու և/կամ պատռված անևրիզման կայունացնելու համար կրանիոտոմիայի, և այս միջամտությունները նույնպես բարձրացնում են արյունահոսության ռիսկը: Քիչ փաստաթղթեր են անդրադառնում աՍԱԱ-ի դեպքում ԵԹ-ի կանխարգելմանը: Մեծամասամբ այս խմբի համար խորհուրդները հիմնված են ԻԻ-ով պացիենտների ընդլայնված դիտարկումների վրա:

Վաղ մոբիլիզացիան օգնում է նվազեցնել ԵԹ-ն լավ մակարդակի աՍԱԱ-ով պացիենտների մոտ, որոնք նյարդաբանական և ֆիզիոլոգիական կայուն են և չունեն վազոսպազմի կլինիկական և/կամ սոնոգրաֆիկ տվյալներ [58]: Մինչև ազդր ձգվող ԷԳ-ն զգալիորեն չի նվազեցնում ԽԵԹ-ի ռիսկը և բարձրացնում է մաշկի վնասման ռիսկը [45, 59, 60]: IPC-ները իջեցնում են ԽԵԹ-ի ռիսկը համեմատ պլացեբոյի [59]: IPC-ների և հակակոագուլյանտների համակցությունը կարող է ունենալ լրացուցիչ արդյունավետություն ԵԹ-ի կանխարգելման համար [27]:

ՈՖՀ-ն իջեցնում է ԽԵԹ-ի ռիսկը [59]: Կիրառվում են 5000 միավոր Ե/մ ներարկման օրվա մեջ երկու անգամ, կամ օրվա մեջ երեք անգամ ռեժիմները, սակայն չկան աՍԱԱ-ով պացիենտների մոտ այս երկու ռեժիմները անմիջականորեն համեմատող հետազոտություններ [59]: Խորհուրդ է տրվում սակայն ապացուցված չէ, որ ՈՖՀ-ի օրը 3 անգամ կիրառումը բարձրացնում է ներզանգային արյունահոսության ռիսկը և օրը 2 անգամ կիրառման ռեժիմը ավելի անվտանգ է, նամանավանդ արյունահոսության կամ ներզանգային վիրաբուժական միջամտության առաջին օրերի ընթացքում [59]:

ՑՄՀ-ն նույնպես իջեցնում է ԽԵԹ-ի ռիսկը, բայց բարձրացնում է ներզանգային արյունահոսության ռիսկը [59, 61 62]: Նեյրովիրաբուժական պացիենտների պարագայում ընդհանուր առմամբ ՑՄՀ ստացող պացիենտների մոտ արյունահոսության հաճախականությունը վիճակագրորեն զգալի ավելի բարձր է

համեմատ մեխանիկական եղանակով կանխարգելում ստացողների ( $p < 0.0005$ ): ՈՖՀ ստացող պացիենտները չունեն արյունահոսության բարձր հաճախականություն ( $p = 0.40$ ) [59]: Կրանիոտոմիայի ենթարկվող պացիենտների պարագայում փոքր դեղաչափով ՑՄՀ-ի վնասը հավանաբար գերակշռում է օգուտին: ՑՄՀ-ի կիրառումը կարելի է սպասել որ կկանխարգելի ԵԹ-ի 8-ից 36 դեպք՝ 4-ից 22 լրացուցիչ ՍԱԱ-ի գնով՝ 1000 յուրաքանչյուր պացիենտի պարագայում: Հաշվի առնելով որ ՍԱԱ-ի արդյունքում հաշմանդամությունը և մահացությունը 2-3 անգամ ավելի շատ են քան ԵԹ-ի պարագայում, ՑՄՀ կարող է դիտարկվել ավելի վտանգավոր քան առհասարակ կանխարգելում չիրականացնելը [63]:

Շատ կենտրոններում աՍԱԱ-ով պացիենտները ռուտին կերպով ենթարկվում են ստորին վերջույթների սոնոգրաֆիկ դոպլեր հետազոտության: Այս մոտեցումը անվտանգ է, սակայն վերջինիս արդյունավետությունը դեռևս պետք է հստակեցվի, և հայտնի չէ նաև արդյոք այս մոտեցումը ֆինանսապես արդյունավետ է [28]:

### **Խորհուրդներ**

- 1. Մենք խորհուրդ ենք տալիս աՍԱԱ-ով բոլոր պացիենտներին իրականացնել ԵԹ-ի կանխարգելում ՈՖՀ-ով (ուժեղ խորհուրդ, բարձր որակի ապացույցներ) բացառությամբ վիրահատական միջամտության ենթարկվելու ենթակա պատռված անևրիզմայով պացիենտների (ուժեղ խորհուրդ, ցածր որակի ապացույցներ):**
- 2. Մենք խորհուրդ ենք տալիս աՍԱԱ-ով պացիենտներին սկսել IPC-ներով ԵԹ-ի կանխարգելում հիվանդանոց ընդունվելուց անմիջապես հետո (ուժեղ խորհուրդ, միջին որակի ապացույցներ):**
- 3. Մենք խորհուրդ ենք տալիս ԵԹ-ի կանխարգելում ՈՖՀ-ով անևրիզմայի վիրաբուժական միջամտությամբ կամ քոյլինգի միջոցով կայունացումից առնվազն 24 ժամ անց (ուժեղ խորհուրդ, միջին որակի ապացույցներ):**

## **ԵԹ-ի կանխարգելումը գանգուղեղային վնասվածքներով ԻԹԲ-ի պացիենտների շրջանում**

Հիվանդանոց ընդունված վնասվածքով հիվանդների շրջանում ԹԶԷ-ն հանդիսանում է առաջին 24 ժամը վերապրած պացիենտների մահվան թվով երրորդ պատճառ [64]: Պոլիտրավմայով պացիենտների շրջանում սուր ԳՈԽՎ-ը հանդիսանում է ԽԵԹ-ի անկախ ռիսկի գործոն, որը հավանաբար պայմանավորված է նվազած շարժունակությամբ, երկարատև ԹԱՇ-ով և պրոկոագուլյանտ գործոնների ակտիվացմամբ [65-67]:

Սուր ԳՈԽՎ-ով պացիենտների շրջանում, ովքեր չեն ստացել կամ ուշացումով են ստացել կանխարգելում ԽԵԹ-ի տարածվածությունը կազմում է 13-17%: Ներգանգային արյունազեղում ունեցող վնասվածքով հիվանդների համար ապացույցների վրա հիմնվող խորհուրդների բացակայությունը բերել է թրոմբոկանխարգելման մոտեցումների անհամապատասխանության և ինստիտուցիոնալ փոփոխականության, և չկա խնամքի կայուն ստանդարտ ԳՈԽՎ-ով պացիենտների ԵԹ-ի կանխարգելում սկսելու ինչպես ՈՖՀ-ով կամ ՑՄՀ-ով դեղաբանական կանխարգելմամբ այնպես էլ IPC-ով մեխանիկական կանխարգելմամբ [68]: Չնայած պոպուլյացիայում ԵԹ-ի լայն տարածմանը, չկան վաղ և հետաձգված դեղաբանական կանխարգելումը համեմատող ՊԲՎՓ-ներ: Առաջահայաց կոհորտային? հետազոտությամբ, Nathans և այլք հայտնաբերել են, որ հակագոագուլյանտ թրոմբոկանխարգելման մեկնարկի 4-ից ավելի օր հետաձգումը բերում է ԽԵԹ-ի դեպքերի եռակի ավելացման, և որ գլխի սուր վնասվածքով պացիենտները կրկնակի ավելի հաճախ են ունենում թրոմբոկանխարգելման հետաձգում 4 օրից ավել [69]: Հետագայում հետահայաց վերանայման? արդյունքում հայտնաբերվել է, որ եթե կանխարգելումը հետաձգվում է 48 ժամից ավելի, վնասվածքային ներգանգային արյունազեղումով բազմաօրգանային վնասվածքով պացիենտների մոտ 3-4 անգամ ավելի հավանական է որ կգարգանա ԽԵԹ, քան առանց գլխի վնասվածքի պացիենտների մոտ (RR 2.67, 95% CI 1.69-4.20) [70]:

Այս պոպուլյացիայի համար հակակոագուլյանտի ընտրությունը հետագա հետազոտման կարիք ունի: Այսօրվա դրությամբ, չկա ուղղակի համեմատություն ՑՄՀ-ի և ՈՖՀ-ի միջև սուր ԳՈԽՎ-ով և ներգանգային արյունազեղումով բազմաօրգանային վնասվածքով պացիենտների ԵԹ-ի կանխարգելման համար:



Ողնուղեի վնասվածքով և առանց գլխի վնասման բազմաօրգան վնասվածքով պացիենտների ՊԲՎՓ-ները ցույց են տվել որ ՑՄՀ-ն համեմատ ՈՖՀ-ի ավելի արդյունավետ է ԵԹ-ի կանխարգելման համար: Ինչպես Վնասվածքների վիրաբուժության արևելյան ասոցիացիայի (Eastern Association for the Surgery of Trauma (EAST)) 2001թ-ի ուղեցույցը, այնպես էլ կրծքային թերապևտների ամերիկյան քոլեջի (American College of Chest Physicians) վնասվածքով հիվանդների ԵԹ-ի կանխարգելման ուղեցույցի 8-րդ վերանայումը խորհուրդ են տալիս գլխի վնասում չունեցող վնասվածքով հիվանդներին ԵԹ-ի կանխարգելում իրականացնել ՑՄՀ-ով [64, 71]: Այնուամենայնիվ, վնասվածքային ներզանգային արյունազեղումով պացիենտների համար EAST ուղեցույցը հաստատում է, որ ՑՄՀ-ն բավարար հետազոտված չէ դրա օգտագործումը խորհուրդ տալու համար, մինչդեռ կրծքային թերապևտների ամերիկյան քոլեջի ուղեցույցը խորհուրդ է տալիս կիրառել ՑՄՀ վնասվածքով բոլոր հիվանդների պարագայում [64]: Գլխի վնասվածքի հիմնադրամի (BTF) 2007թ.-ի սուր ԳՈԽՎ-ով պացիենտների թրոմբոկանխարգելման ուղեցույցը նշում է, որ այս նշված իրավիճակներում նախընտրելի դեղորայքը հայտնի չէ, և որ չկան բավարար ապացույցներ ԵԹ-ի կանխարգելման համար կանխարգելիչ հակակոագուլյանտի նշանակման ժամկետները խորհուրդ տալու համար [72]:

### **Խորհուրդներ**

- 1. Մենք խորհուրդ ենք տալիս ԵԹ-ի կանխարգելման համար սկսել IPC ԳՈԽՎ-ից կամ կրանիոտոմիայից հետո 24 ժամվա ընթացքում՝ հիմնվելով ԻԻ և հետվիրահատական կրանիոտոմիայի ապացուցողական տվյալների վրա (թույլ խորհուրդ, ցածր որակի ապացույցներ):**
- 2. Մենք խորհուրդ ենք տալիս ԳՈԽՎ-ով և ներզանգային արյունազեղումով պացիենտների պարագայում ԵԹ-ի կանխարգելման համար սկսել ՑՄՀ կամ ՈՖՀ վնասվածքից 24-48 ժամվա ընթացքում (թույլ խորհուրդ, ցածր որակի ապացույցներ):**
- 3. Մենք խորհուրդ ենք տալիս ԳՈԽՎ-ով պացիենտների պարագայում ԵԹ-ի կանխարգելման համար մեխանիկական միջոցների կիրառումը՝ ինչպիսիք են օրինակ IPC-ները՝ հիմնվելով այլ նյարդաբանական**

**վնասվածքների՝ ինչպես օրինակ ԻԻ-ի տվյալների վրա (թույլ խորհուրդ, ցածր որակի ապացույցներ):**

### **ԵԹ-ի կանխարգելումը գլխուղեղի նորագոյացություններով ԻԹԲ-ի պացիենտների շրջանում**

Չարորակ գլխումայիով պացիենտների մոտավորապես 20-30%-ի մոտ զարգանում է ԵԹ, գլխուղեղի նորագոյացության կապակցությամբ կրանիոտոմիայի ենթարկված պացիենտների մոտ ԽԵԹ-ի ռիսկը 31% է: Գլխուղեղի նորագոյացություններով պացիենտների մոտ ԵԹ-ի տարբեր ռիսկի գործոններ են հայտնաբերվել, ինչպիսիք են օրինակ բազմաձև գլիոբլաստոման (glioblastoma multiforme tumor), գոյացության մեծ չափերը, ոտքերի պարեզը, մեծ տարիքը, վիրահատության երկարատևությունը, քիմիոթերապիան և ստերոիդների կիրառումը [73]:

ԽԵԹ-ի կանխարգելումը այս պոպուլյացիայի շրջանակներում կարող թ լինել կամ մեխանիկական (IPC-ի միջոցով) և/կամ դեղաբանական (ՈՖՀ-ով կամ ՑՄՀ-ով), և արյունահոսական բարդությունները պետք է դիտարկման առարկա լինեն, երբ ընտրվում է առավել համապատասխան մեթոդ: Դեղորայքը արդյունավետ է ԵԹ-ի նվազեցման համար: Simanek և այլք հետազոտել են բարձր դասի գլխումայով (high-grade glioma) 63 պացիենտ, ովքեր կրել են ԷԳ և հետո ստացել են 40մգ էնոքսապարին, 2500 միավոր դալտեպարին կամ 5000 միավոր դալտեպարին օրվա մեջ մեկ անգամ [73]: 24%-ի մոտ (15/63) զարգացել է ԵԹ (60%-ի (9/15) մոտ ԹՁԷ և 40%-ի (6/15) մոտ ԽԵԹ): ԵԹ-ի համակցված կանխարգելում ստացած պացիենտների 5%-ի մոտ է զարգացել ԵԹ: Արյունահոսական բարդություններ չեն դիտվել: Robbins և այլք տվել են 5000 միավոր դալտեպարին նոր ախտորոշված բազմաձև գլիոբլաստոմայով 42 հիվանդների [74]: Դալտեպարինի ընդունման 6.3 ամիս միջին տևողության ընթացքում չի եղել ԵԹ կամ ներգանգային արյունազեղում: Perry և այլք հետազոտել են ԵԹ-ի կանխարգելման համար տինզապարինի անվտանգությունը նոր ախտորոշված չարորակ գլխումայով (3-րդ և 4-րդ դաս) 40 պացիենտների մոտ [75]: 4500 միավոր Ե/մ տինզապարինը սկսվել է կիրառել հետվիրահատական շրջանի 2 օրից 4 շաբաթ ընկած ժամանակահատվածում և շարունակվել մինչև 12 ամիս: ԿՆՀ-ի արյունազեղումների 5% հաճախականություն է գրանցվել: Մեկ այլ

հետազոտությունում Perry և այլք նոր ախտորոշված չարորակ գլիոմայով պացիենտներին պատահական բաշխմամբ տվել են կամ 5000 միավոր դալտեպարին ( $n = 99$ ) կամ պլացեբո ( $n = 87$ ) [16, 76]: Առաջին 6 ամսվա ընթացքում ԵԹ-ի տարածվածությունը դալտեպարինի խմբում կազմել է 9%, իսկ պլացեբոյի խմբում 15% ( $p = 0.29$ ): 6 ամսվա ընթացքում ներգանգային արյունազեղում դիտվել է դալտեպարինի խմբում 3%-ի, իսկ պլացեբոյի խմբում 0%-ի մոտ ( $p = 0.22$ ), և 12 ամսվա ընթացքում ներգանգային արյունազեղում դիտվել է համապատասխանաբար 5%-ի և 1%-ի մոտ ( $p = 0.48$ ): Ի հակադրություն, Cage և այլք հետահայացորեն վերանայել? են մենինգիոմայի վիրաբուժական մասնահատմամբ 86 պացիենտի. 24 պացիենտ ստացել են էնոքսապարին վիրահատությունից հետո 48 ժամվա ընթացքում և 62-ը չեն ստացել կանխարգելում [77]: Չի էղել ներուղեղային արյունազեղման տարածվածության զգալի տարբերություն էնոքսապարինի և հսկաման խմբում (12.5% և 12.9% համապատասխանաբար) [77]:

## **Խորհուրդներ**

- 1. Մենք խորհուրդ ենք տալիս ԵԹ-ի կանխարգելում կամ ՑՄՀ-ով կամ ՈՖՀ-ով հոսպիտալիզացիայի ընթացքում՝ գլխուղեղի նորագոյացություններով պացիենտներին, ովքեր նշանակալի արյունահոսության փոքր ռիսկ ունեն և որոնց մոտ բացակայում է հեմոռագիկ փոխակերպման նշանները (ուժեղ խորհուրդ, միջին որակի ապացույցներ):**

## **ԵԹ-ի կանխարգելումը ողնուղեղի վնասվածքով ԻԹԲ-ի պացիենտների շրջանում**

Ողնուղեղի վնասվածքը (ՈՎ) հանդիսանում է ԽԵԹ-ի անկախ ռիսկի գործոն, չնայած նրան որ վերջինիս տարածվածությունը այս պոպուլյացիայում տարբերվում է տարբեր հետազոտություններում՝ պայմանավորված ախտորոշիչ մեթոդների տարբերությամբ [78]: Կլինիկական չափորոշիչներ կիրառելիս ստորին վերջույթների ԽԵԹ-ի տարածվածությունը տատանվում է 12%-ից 64% սահմաններում: Նշանառված? ֆիբրինոգենի, պլետիզմոգրաֆիայի կամ ֆլեբոգրաֆիայի կիրառման պարագայում և կանխարգելման բացակայության պայմաններում ԽԵԹ-ի տարածվածությունը տատանվում է 50%-ից 80%

սահմաններում [7]: Պարալիզված ՈՎ-ով պացիենտների շրջանում ԽԵԹ-ի ընդհանուր գրանցված տարածվածությունը առաջին 12 շաբաթվա ընթացքում տատանվում է 18%-ից 100% սահմաններում և ԹԶԷ-ի հաճախականությունը մոտավորապես կազմում է 4.6%-14%: Ռիսկը ամենամեծն է վնասվածքը ստանալուց հետո առաջին 2 շաբաթվա ընթացքում և նվազում է առաջին 3 ամիսներից հետո: Չնայած որ ռիսկը էլ ավելի է նվազում 6 ամիս հետո, ԽԵԹ-ի դեպքեր գրանցվում են վնասվածքից նաև ամիսներ անց [78, 79]:

ՈՎ-ով պացիենտների մոտ ԽԵԹ-ի կանխարգելման համար պասիվ կամ ակտիվ մի շարք շարժողական վարժությունների և/կամ կոմպրեսիոն գուլպաների արդյունավետությունը հայտնի չէ: Առաջահայաց կլինիկական փորձարկման ժամանակ համեմատվել է ՑՄՀ-ի ու վաղ մոբիլիզացիայի (72 ժամվա ընթացքում) համակցությունը ՑՄՀ-ի ու ուշ մոբիլիզացիայի (8-28 օր, միջինում 12 օր) համակցության հետ [79]: ԽԵԹ-ի տարածվածությունը վաղ խմբում կազմել է 2% ընդդեմ ուշ խմբի 26%-ի:

Առանձին կիրառման դեպքում IPC-ները բավարար չեն ՈՎ-ով պացիենտների մոտ ԽԵԹ-ն կանխարգելելու համար: Green [80] և Merli [81] նկարագրել են ԽԵԹ-ի նվազում IPC-ների և դեղաբանական կանխարգելում համատեղ կիրառելու պարագայում: Եթե մեխանիկական կամ դեղաբանական կանխարգելումը իրականացնելը հնարավոր չէ, պետք է դիտարկել սոնոգրաֆիկ դուպլեքս հսկողություն՝ հնարավոր հետագա ստորին սիներակի ֆիլտրի տեղադրումով՝ երբ օբյեկտիվ տվյալներով հաստատվում է ԽԵԹ-ի առկայությունը: Բարձր ռիսկի վնասվածքով պացիենտների շրջանում ՈՎ-ի փոքրաթիվ դեպքերի մոտ նկարագրվել է ստորին սիներակի ֆիլտրները արդյունավետ են եղել ախտանշային ԹԶԷ-ի կանխարգելման հարցում [82-84]:

ՈՖՀ և ՑՄՀ արդյունավետ են ՈՎ-ի ժամանակ ԽԵԹ-ի նվազեցման համար [80, 85, 86]: Կրճքային թերապևտների ամերիկյան քոլեջի հակաթրոմբոտիկ ուղեցույցի (American College of Chest Physicians Antithrombotic Guidelines) 8-րդ վերանայումը խորհուրդ է տալիս ՈՖՀ-ի (Grade 2C) կամ ՑՄՀ-ի (Grade 2C) կամ մեխանիկական կանգարգելման, նախընտրելի է IPC-ի (Grade 2C) կիրառումը՝ փոխարեն կանխարգելում չանելու [21]: ՈՖՀ-ի ճշգրտված? դեղաչափի կիրառումը խորհուրդ է տրվում ողնուղեղի բժշկության կոնսորցիումից կողմից (The Consortium for Spinal Medicine) [87]: Սուր ՈՎ-ից հետո ԵԹ-ի կանխարգելման

նպատակով դալտեպարին (5000 միավոր օրը մեկ անգամ) կամ ՈՖՀ (5000 միավոր օրը երկու անգամ) ստացող 90 պացիենտների հետահայաց կոհորտային հետազոտությունը չի հայտնաբերել զգալի տարբերություն երկու դեղերի միջև ( $p = 0.7054$ ) ԵԹ-ի տարածվածության (ընդհանուր 7.78% ) և ստացած կանխարգելման տեսակի միջև կապի տեսանկյունից (ՈՖՀ 3/47 ընդդեմ դալտեպարին 4/43) [88]: Արժեքի վերլուծությունը ցույց է տվել, որ ՈՖՀ-ի ճշգրտված? դեղաչափը ֆինանսապես ավելի արդյունավետ է քան էնոքսապարինը 30մգ օրը երկու անգամ [88]:

ՈՎ-ով պացիենտների մոտ ԽԵԹ-ի կանխարգելման տևողությունը լիարժեք հաստատված չէ: Ողնուղեղի բժշկության կոնսորցիումը (The Consortium for Spinal Medicine) խորհուրդ է տալիս որոշել ԽԵԹ-ի կանխարգելման տևողությունը հիմնվելով ֆունկցիոնալ վիճակի, լրացուցիչ ռիսկի գործոնների կամ բժշկական իրավիճակների և պացիենտների համար աջակցման ծառայությունների հասանելիության վրա [89]:

### **Խորհուրդներ**

- 1. Մենք խորհուրդ ենք տալիս սկսել ԵԹ-ի կանխարգելումը հանարավորինս շուտ՝ վնասվածքից հետո 72 ժամվա ընթացքում (ուժեղ խորհուրդ, բարձր որակի ապացույցներ):**
- 2. Մենք խորհուրդ ենք տալիս չկիրառել մեխանիկական միջոցները միայնակ՝ ԵԹ-ի կանխարգելման համար (թույլ խորհուրդ, ցածր որակի ապացույցներ):**
- 3. Մենք խորհուրդ ենք տալիս ԵԹ-ի կանխարգելման համար ՑՄՀ կամ համապատասխանեցված դեղաչափով ՈՖՀ անմիջապես արյունահոսությունը վերահսկելուց հետո (ուժեղ խորհուրդ, միջին որակի ապացույցներ):**
- 4. Եթե հնարավոր չէ իրականացնել ԵԹ-ի կանխարգելում ՑՄՀ-ի կամ ՈՖՀ-ի միջոցով, մենք խորհուրդ ենք տալիս մեխանիկական կանխարգելում IPC-ի միջոցով (թույլ խորհուրդ, ցածր որակի ապացույցներ):**

## **ԵԹ-ի կանխարգելումը նյարդամկանային հիվանդություններով ԻԹԲ-ի պացիենտների շրջանում**

Հոսպիտալիզացիան, ծայրահեղ ծանր հիվանդությունները, անշարժությունը և շնչական անբավարարությունը ԽԵԹ-ի և ԹՁԷ-ի հստակ հաստատված և հզոր ռիսկի գործոններ են [90]: Այսպիսով, այն պացիենտները, ովքեր ծայրահեղ ծանր հիվանդ են կապված այնպիսի նյարդամկանային հիվանդությունների հետ, ինչպիսիք են Գիլյեն-Բարրեի սինդրոմը (ԳԲՍ) (Guillain-Barre Syndrome (GBS)) և միասթենիա գրավիսը (ՄԳ) (myasthenia gravis (MG)), ունեն ԽԵԹ-ի և ԹՁԷ-ի բարձր ռիսկ: ԳԲՍ-ով պացիենտների դեպքերի շարքի հրապարակված տվյալների համաձայն, օրինակ, ախտանշային ԽԵԹ-ի ռիսկը մոտավոր կազմում է 4-7%, իսկ ԹՁԷ-ի ռիսկը՝ 3-7% [91-96]: Հետևաբար, ԵԹ-ի բարդությունների կանխարգելումը այս պացիենտների խնամքի առանցքային բաղադրիչն է: Այնուամենայնիվ, փորձագետների խումբը չի գտել որևէ հետազոտություն, որը համակարգված հետազոտած լիներ ԵԹ-ի կանխարգելման որևէ մեթոդի ազդեցությունները նյարդամկանային հիվանդություններով հոսպիտալիզացված կամ ծայրահեղ ծանր պացիենտների շրջանում: Այդ պատճառով մենք էքստարպոլյացրել ենք տվյալները ամենամոտ նմանատիպ պացիենտների խմբից, որոնց համար առկա են տվյալներ. հոսպիտալիզացված և ծայրահեղ ծանր վիճակում գտնվող պացիենտներ և ՈՎ-ով պացիենտներ:

Մի շարք մետա վերլուծություններ հետազոտել են ԵԹ-ի կանխարգելման տարբեր ձևերի օգտակարությունը՝ հոսպիտալիզացված և ծայրահեղ ծանր պացիենտների շրջանում [90, 97-100]: Դրանցից ամենաթարմ և արժեքավորները հետազոտել են տվյալներ 4-8 ՊԲՎՓ-ներից (5206-8605 պացիենտներ)՝ կախված ելքից [90]: Հոսպիտալիզացված պացիենտների մեջ, համեմատ կանխարգելում չիրականացնելու հետ, կանխարգելիչ ՈՖՀ-ի, ՑՄՀ-ի կամ ֆոնդապարինուքսի կիրառումը բերել է RR 0.47 (95% CI 0.22-1) ախտանշանային ԽԵԹ-ի համար, և RR 0.41 (95% CI 0.22-0.76) մահացու ԹՁԷ-ի համար: Չի հայտնաբերվել վիճակագրորեն նշանակալի ազդեղություն մահվան չբերող ԹՁԷ-ի, նշանակալիարյունահոսության և բոլոր պատճառներից մահացության վրա: Երբ ցածր դեղաչափով ՈՖՀ-ն (5000 միավոր ե/մ 2 կամ 3 անգամ օրեկան) համամատվել է ՑՄՀ-ի հետ, չի հայտնաբերվել տարբերություն ԽԵԹ-ի, ԹՁԷ-ի կամ մահացության մեջ: Այն դեպքում, երբ առկա է եղել է նշանակալիարյունահոսության հարաբերական ռիսկի զգալի նվազում? կապված

ՑՄՀ-ի հետ (RR 0.48, 95% CI 0.24-0.99), բացարձակ ազդեցությունը փոքր է եղել, կազմելով 5-ից պակաս դեպք յուրաքանչյուր 1000 բուժվողների մոտ: Երբ համեմատվել են ՈՖՀ-ի կիրառման օրը 2 անգամ և օրը 3 անգամ ռեժիմները (համամատությունը կատարվել է անուղղակի՝ համակցված բուժման համեմատության մետա վերլուծությամբ, քանի որ այս երկու ռեժիմները երբեք ուղղակի չեն համեմատվել միմյանց հետ), չի հայտնաբերվել վիճակագրորեն նշանակալի տարբերություններ ԹՁԷ-ի, ԽԵԹ-ի, նշանակալի արյունահոսության կամ մահացության մեջ:

ԵԹ-ի մեխանիկական կանխարգելման միջոցները էլ ավելի վատ են ուսումնասիրված հոսպիտալիզացված կամ ծայրահեղ ծանր հիվանդների մոտ: Այս պոպուլյացիայում ԷԳ-ների կիրառումը կապված չի որևէ օգուտի հետ՝ ախտանշային ԽԵԹ-ի, մահվան չբերող ԹՁԷ-ի կամ մահացության տեսանկյունից, սակայն համաձայն CLOTS I հետազոտության արդյունքում ստացված տվյալների, լայնորեն կապված է մաշկի քայքայման/խոցերի/հարման/մեռուկի առաջացման զգալիորեն բարձր ռիսկի հետ (RR 4.02, 95% CI 2.34-6.91) [45, 90]: Ինչպես ԷԳ-ները, այնպես էլ IPC-ին դեղորայքային կանխարգելմանը ավելացնելու պարագայում վիրաբուժական պացիենտների մոտ կապված են ԽԵԹ-ի, սակայն ոչ ԹՁԷ-ի, ռիսկի նվազման հետ [101, 102]: Այս խնդիրը չի ուսումնասիրվել բժշկական? պացիենտների մոտ: Կա ենթադրություն, որ այս պացիենտների մոտ ՑՄՀ-ի կիրառումը կարող է ավելի արդյունավետ լինել ախտանշային ԹՁԷ-ի կանխարգելման հարցում քան ՈՖՀ-ի օրը 2 անգամյա կիրառումը (RR 0.58, 95% CI 0.34-0.97), սակայն սա հիմնված է փոքրաթիվ ԹՁԷ-ի դեպքերով եզակի հետազոտության արդյունքների վրա [90, 103]: Այս խմբի պացիենտների մոտ ԻԹԲ-ում ԵԹ-ի կանխարգելման տևողության վերաբերյալ որոշումները ուղղորդելու համար չկան ուղղակիորեն արժեքավոր տվյալներ:

## **Խորհուրդներ**

- 1. Մենք խորհորդ ենք տալիս որպես ԵԹ-ի կանխարգելման նախընտրելի մեթոդ կիրառել ՈՖՀ-ի կանխարգելիչ դեղաչափեր (օրը երկու կամ երեք անգամ), կամ ՑՄՀ կամ ֆոնդապարինուքս (ուժեղ խորհուրդ, միջին որակի ապացույցներ):**

2. Մենք խորհուրդ ենք տալիս այն պացիենտների շրջանում, որտեղ դեղորայքային կանխարգելումը հղի է արյունահոսության շատ բարձր ռիսկով, ԵԹ-ի կանխարգելման համար կիրառել IPC (ուժեղ խորհուրդ, միջին որակի ապացույցներ):
3. Մենք խորհուրդ ենք տալիս նյարդամկանային հիվանդություններով պացիենտների շրջանում համակցել ԵԹ-ի դեղաբանական և մեխանիկական (IPC) կանխարգելիչ միջոցները (թույլ խորհուրդ, ցածր որակի ապացույցներ):
4. Մենք խորհուրդ ենք տալիս ԵԹ-ի կանխարգելման համար կիրառել ԷԳ-ներ միայն այն պացիենտների մոտ, որոնց մոտ հնարավոր չէ ոչ դեղորայքային, ոչ IPC-ով կանխարգելում (թույլ խորհուրդ, ցածր որակի ապացույց):
5. Մենք խորհուրդ ենք տալիս շարունակել ԵԹ-ի կանխարգելումը երկարատև՝ առնվազն սուր հոսափտալիզացիայի շրջանում կամ մինչ շարժունակության վերականգնումը (թույլ խորհուրդ, շատ ցածր որակի ապացույցներ):

### **ԵԹ-ի կանխարգելումը նյարդավիրաբուժական և նյարդա-անոթային միջամտությունների ենթարկվող ԻԹԲ-ի պացիենտների շրջանում**

Հետվիրահատական ԵԹ-ն, ինչպիսիք են ԽԵԹ-ը և ԹՁԷ-ն, հիվանդացության և մահացության կարևոր պատճառ են ընդհանուր նյարդավիրաբուժական պոպուլյացիայի շրջանում: Նյարդավիրաբուժական պացիենտները և նրանց հետ անցկացվող միջամտությունները լայնորեն տարբերվում են: Այդպիսով ընտրողական ողնուղեղային վիրահատության, գլխուղեղի նորագոյացության մասնահատման կամ միջամտական ներզարկերակային միջամտությունների ենթարկվող պացիենտները ունեն ԵԹ-ի տարբեր տարածվածություն: Ողնուղեղի ծավալուն վերականգնողական վիրահատության ենթարկվող պացիենտների մոտ ԽԵԹ-ի տարածվածությունը կազմում է 0-15.5%՝ ԹՁԷ-ի մինչև 15% տարածվածությամբ [104]: Ընտրողական ողնուղեղային վիրահատության ենթարկվող պացիենտների մոտ ԵԹ-ի ընդհանուր տարածվածությունը կարող է տատանվել 0.3%-ից մինչ 31%՝ 2.1% գնահատված ամբողջական միավորված ռիսկով [105]: Այս պոպուլյացիայում ԽԵԹ-ի և ԹՁԷ-ի



տարածությունը համապատասխանաբար 0.4% և 0.4% է [106-108]: Այնպիսի յուրահատուկ դիրքավորման մարտավարություն, ինչպիսիք են փորի վրա պառկած կամ kneeling? դիրքերը, պահանջող միջամտությունները, կապված են եղել ԵԹ-ի զրո հաճախականության հետ [31]: Նորգոյացության կապակցությամբ կրանիոտոմիայի ենթարկվող պացիենտների մոտ ԽԵԹ-ի և ԹՁԷ-ի համակցված հաճախականությունը կազմել է 3%, իսկ բարձր դասի գլխոմաներով պացիենտների շրջանում ընդհուպ մինչև 28% [109, 110]: Քիչ տվյալներ են առկա նյարդաբանորեն հատուկ ներգարկերակային միջամտություններով պացիենտների համար: Պացիենտները հակամակարդիչներ են ստանում բազմաթիվ ներանոթային միջամտությունների ընթացքում, ինչը կարող է պոտենցիալ ազդել թրոմբոէմբոլիկ դեպքերի առաջացման հաճախականության վրա:

Վերջին 40 տարիների ընթացքում, բազմաթիվ փորձարկումներ հետազոտել են նյարդավիրաբուժական պացիենտների՝ այդ թվում կրանիոտոմիայի ենթարկվածների մոտ ԵԹ-ի կանխարգելման միջոցառումները [34, 59, 111-120]: Ամենահաճախ միջամտություններն են ԷԳ-ն, IPC-ն, ՑՄՀ-ն և ՈՖՀ-ն: Վերջին երկու մետա վերլուծությունները համեմատել են ԵԹ-ի կանխարգելման օգուտները և պոտենցիալ ռիսկերը՝ ներառյալ ներգանգային արյունազեղումը [112, 117, 121]: Ամենավերջին մետա վերլուծությունը ներառում է 30 առաջահայաց հետազոտություններ (18 ՊԲՎՓ և 12 կոհորտային հետազոտություն): Եզրակացվել է, որ ՑՄՀ-ն ավելի քիչ արդյունավետ է քան IPC-ն (ՑՄՀ. RR 0.60, CI 0.44-0.81; ICP. RR 0.41, 95% CI 0.21-0.78), ավելի ուշ առճակատ (head to head) փորձարկման ժամանակ դիտարկված արդյունավետության մեջ չի եղել տարբերություն (RR 1.97, 95% CI 0.64-6.06) [117]: Այս մետա վերլուծությունը ցույց է տալիս որ ՑՄՀ-ի և ICP-ի կիրառումը հավասարապես անվտանգ է և արդյունավետ է ներգանգային արյունազեղման սահմանափակ ռիսկով [122-128]:

Այնուամենայնիվ, այս լայնածավալ մետա վերլուծությունները ցույց չի տվել ԵԹ-ի կանխարգելման ռիսկերը և օգուտները՝ նյարդավիրաբուժական պացիենտների կոնկրետ ենթախմբերում: ՈՖՀ-ն արդյունավետ է, սակայն համեմատ այլ միջոցների ունի արյունահոսության ավելի մեծ ռիսկ [115, 129]: Կրանիոտոմիայի ենթարկվող պացիենտների մոտ անզգայացման ներածման ժամանակ, կամ ընդհանուր առմամբ կրանիոտոմիայի ենթարկվող պացիենտների մոտ ՑՄՀ-ի կանխարգելիչ կիրառումը կապված է եղել հետվիրահատական ներգանգային արյունազեղման շատացման հետ [130, 59, 61, 62]: Ի հակադրություն, այլ հետազոտություններ արձանագրել են

